ՆԱՎԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՆԸ ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. Գործոնային վերլուծության մեթոդը քաղաքագիտության մեջ: Դիտարկումներ գործոնային վերլուծության հասկացական ապարատի վերաբերյալ:

Պետությունների արտաքին քաղաքական վարքը, ինչպես դա ինքնին ակնհայտ է, պայմանավորված է տարաբնույթ գործոններով: Սովորաբար միմյանցից տարբերակվում են մի կողմից ներքին և արտաքին և, մյուս կողմից, հոգևոր ու նյութական, և մեկ այլ կողմից՝ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնները: Ներքին գործոնների թվին են դասվում, օրինակ, քաղաքական կարգը, ձևավորված ավանդույթները, գիտությունը, հասարակական կյանքի համանման մյուս իրողությունները: Դրանց «հակոտնյան» արտաքին գործոններն են, որոնց աղբյուրը կարող են լինել մյուս պետությունները, միջազգային համակարգի մյուս սուբյեկտները, որոնցից եկող ազդակները ներգործում են պետության ներքին կյանքի ու մյուս պետությունների հետ հարաբերություններում նրա պահվածքի վրա: Բայց դրա հետ մեկտեղ արտաքին գործոնների կարգին է դասվում բնական այն միջավայրը, որտեղ հասարակությունը ծավալում է իր կենսագործունեությունը: Դրա տակ սովորաբար հասկացվում են աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները, բնական ռեսուրսները, որոնք հայտնվում են ժողովուրդների ու պետությունների տրամադրության տակ, ինչպես հաճախ ասում են, «պատրաստի վիճակում»: Հասարակական զարգացումներում և պետությունների հարաբերություններում, առանձնացվում են նաև օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Սուբյեկտիվ գործոնները սովորաբար կապվում են սոցիալական խմբերի, կուսակցությունների, առաջնորդների գիտակցական, կամային գործողությունների հետ, այն դեպքում, երբ օբյեկտիվ են որակվում այն գործոնները, որոնք ձևավորվում և գործառնում են նրանց կամքից ու գիտակցությունից անկախ: Միամյանցից տարբերակվում են նաև նյութական և հոգևոր գործոնները: Վերջինիս տակ սովորաբար նկատի են առնվում մշակույթը, արվեստը, դավանանքը, ավանդույթները և նման «անյութական իրողություններ», որոնք հակադրվում են քաղաքական գործընթացների առարկայական, ֆիզիկական կեցություն ունեցող գործոններին, որպիսիք են գործարանները, ենթակառույցները, այլևայլ տեխնիկական միջոցները և այլն:

Քաղաքականության վրա ներազդող գործոնների նշված դասակարգումը, այնուամենայնիվ, անթերի չէ: Այդ մոտեցմամբ նույն գործոնը կարող է միաժամանակ հայտնվել տարբեր խմբերում, ինչը երևույթների դասակարգմանը ներկայացվող տրամաբանական պահանջների խախտում է: Ընդունված դասակարգման տեսակետից որպես *արտաքին գործոն* են բնութագրվում, ասենք, ԱՄՆ կողմից Իրանի վրա իրագործվող ֆինանսական ճնշումները կամ ամերիկյան ապրելակերպի ու հոգևոր արժեքների արտահանման քաղաքականությունը և, մյուս կողմից, Իրանի աշխարհագրական դիրքը կամ նավթը: Սակայն ակնհայտ է, որ դրանք տարաբնույթ գործոններ են, թե իրենց գործառույթների, թե ազդեցության ուժի ու դինամիկայի, թե հետևանքների տեսակետից: Ընդգծելով այդ հանգամանքը, նպատակահարմար ենք գտնում արտաքին քաղաքականության վրա ազդող գործոնները դասակարգել մեկ այլ հիմքով, միմյանցից տարբերակելով *սոցիալական ծագման* և *բնական ծագման գործոնները:* Այդ դեպքում ներքին, արտաքին, սուբյեկտիվ և հոգևոր բազմաթիվ գործոններ կդասվեն մեկ խմբում՝ սոցիալական ծագման գործոնների /կամ ուղղակի՝ սոցիալական գործոնների/ խմբում՝ «հակադրվելով» ոչ սոցիալական ծագման, այսինքն՝ բնական ծագման գործոններին /կամ ուղղակի՝ բնական գործոններին/: Նման տարբերակումը թույլ է տալիս վեր հանել և իմաստավորել հիմնախնդրի այլ կողմեր, որոնք «տեսանելի չեն» մյուս դիտանկյուններից: Նավթը, ինչպես մյուս հանքային ռեսուրսները և աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները պետության արտաքին քաղաքականության վրա ազդող բնական գործոններ են, որոնց նշանակության բացահայտումը ենթադրում է դրանց հստակ տարբերակումը ներքին ու արտաքին սոցիալական ծագման գործոններից: Մեր տեսակետից այդ տարբերակումը ունի տեսական, մեթոդաբանական որոշակի ներուժ և կարող է նպաստել հիմնախնդրի ավելի խորը ըմբռնմանը:

Սոցիալական ծագման գործոնների առանձնացման փորձ քաղաքագիտական գրականության մեջ արված է: Մասնավորապես Լոյդ Ջենսենը իր "Explaining Foreign Policy" /1/ աշխատության մեջ համանման մի բան առաջարկում է՝ մուծելով *societal determinants /սոցիալական դետերմինանտներ/* հասկացությունը, որի տակ նա նա շարադրում է «ազգային բնավորություն», «նացիոնալիզմ» և «սոցիալական ատրիբուտներ» պարագրաֆները: Սակայն նա հետևողականություն չի ցուցաբերում իր մոտեցման մեջ, դրանցից առանձնացնելով տնտեսական դետերմինանտները /գործոնները/, չնայած դրանք նույպես սոցիալական ծագման գործոններ են:

Պետության արտաքին քաղաքականությունը պայմանավորող գործոնների հարաբերության հարցը հասարակագիտության, և առավելապես փիլիսոփայության ու քաղաքագիտության, ավանդական հարցերից է: Դեռևս 18-րդ դարում ֆրանսիական փիլիսոփա, պատմաբան Մոնտեսքյոի /1689-1755/ շնորհիվ որպես հասարակագիտական տեսություն ձևավորվեց *աշխարհագրական դետերմինիզմը*, որը աշխարհագրական միջավայրը դիտում է որպես հասարակական զարգացման վճռորոշ գործոն: Վերջին երկու հարյուրամյակներում արդյունաբերապես զարգացած այն երկրների փորձը, որոնք տնտեսական տպավորիչ ձեռքբերումներ ունեցան "ներքին գործոնների" շնորհիվ, թվում էր որոշակիորեն արժեզրկեցին աշխարհագրական միջավայրի դերը հասարակական զարգացումներում: Սակայն նույն ժամանակաշրջանը և հատկապես քսաներորդ դարը բացահայտեցին խնդրի նոր կողմեր: Պարզվեց, որ արդյունաբերական երկրների զարգացումը էապես պայմանավորված է հասարակության նկատմամբ "արտաքին ծագում" ունեցող բնական գործոններով: Աշխարհագրական գործոնի դերակատարությունն ստացավ ավանդականից տարբեր քաղաքագիտական իմաստավորումներ, մեկնաբանություններ ու գնահատականներ: Խորհրդանշական է, որ հենց տասնիներորդ և քսաներորդ դարերի սահմանգլխին լույս տեսավ դասական գեոպոլիտիկայի հիմնադիր Ֆրիդրիխ Ռատցելի /1844-1904/ հիմնարար աշխատությունը "Քաղաքական աշխարհագրություն" վերտառությամբ: Այդ և դրան նախորդած ու հաջորդած գործերով, որոնց մեջ առանձնանում է 1900 թ. լույս տեսած "Ծովը՝ ժողովուրդների հզորության աղբյուր" աշխատությունը, Ռատցելը սկզբնավորեց քաղաքագիտական հետազոտությունների մի ողջ ուղղություն, որոնցում բացահայտվում են պետության՝ որպես քաղաքական հաստատության, և աշխարհագրական գործոնների միջև խորքային կապերը: Նրա ժամանակակից Ալֆրեդ Մեհենը /1840-1914/ "Պատմության վրա ծովային ուժի ազդեցության մասին: 1660-1783" աշխատության մեջ պետությունների տնտեսական հզորությունը, միջազգային համակարգում նրանց գրաված տեղը պայմանավորող գործոնների մեջ առանձնացրեց ծովային գործոնը: Ինչպես հայտնի է, աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում այդ թեմայի նոր տեսանկյուններ բացահայտեց Հելֆորդ Մակկինդերը /1861-1947/: Նրա "Պատմության աշխարհագրական առանցքը" աշխատությունը վերաբերում էր ծովային ու ցամաքային երկրների ռազմավարական ներուժի համեմատությանը: Քսաներորդ դարում, հատկապես նրա երկրորդ կեսում, բնական ռեսուրսների թեման այնպես սերտորեն է հյուսվել խոշոր տերությունների առաջին հայացքից զուտ քաղաքական մտադրություններ-

ին ու պրակտիկ գործունեությանը, որ հաճախ դժվար է լինում դրանք տարանջատել միմյանցից:

Պետությունների արտաքին քաղաքականությունը պայմանավորող գործոնների հարաբերության, դրանց գործառույթների, տարբեր քաղաքակրթական միջավայրերում դրանց գործառնության տարբերությունների բացահայտման հարցը քաղաքագիտության տեսական բարդ հարցերի թվին է պատկանում:

Քաղաքական երևույթների ուսումնասիրությունը դրանք պայմանավորող գործոնների դիտակետից կատարվում է հետազոտական այն մեթոդով, որը հայտնի է որպես գործոնային վերլուծության մեթոդ: Այն ժամանակակից գիտական իմացության կարևորագույն մեթոդներից է: Սոցիալական գիտությունների շարքում այն հատկապես լայն կիրառություն ունի տնտեսագիտության մեջ: Դա բացատրվում է նրանով, որ գործոնային վերլուծության համար ստեղծված մաթեմատիկական ապարատը համեմատաբար հեշտությամբ է ներդրվում տնտեսագիտական նյութում: Քաղաքագիտությունը ձևական մեթոդների կիրառության հնարավորությունների տեսակետից դեռևս չի կարող համեմատվել տնտեսագիտության հետ: Մաթեմատիկական ու տրամաբանական մոդելավորման մեթոդները քաղաքագիտության մեջ ըստ էության կատարում են իրենց առաջին քայլերը:

Քաղաքական գործընթացների ցանկացած վերլուծություն ուղղակի կամ անուղղակի ձևով գործ ունի դրանց վրա ազդող գործոնների հետ: Բանն այն է, որ քաղաքական պլանավորման ցանկացած ծրագիր /տեղական ու խորհրդարանական ընտրություններից մինչև գլոբալ ռազմավարական նախագծերի մշակումը/ այսպես թե այնպես գործ ունի այդ նախագծերի իրականացմանը նպաստող կամ խոչընդոտող գործոնների գնահատման հետ՝ անկախ այն բանից, տրվում, թե չի տրվում գործոնային վերլուծության մեթոդի անունը: Ընդ որում կարևոր է նկատի ունենալ, որ քաղաքական երևույթների վերլուծության գործոնային մեթոդը ուղղված կամ «կողմնորոշված է» դեպի այդ երևույթների գործընթացային կողմը: Քաղաքական երևույթների դաշտում գործոնային վերլուծության մեթոդը առաջին հերթին "տեսնում է" դրանց դինամիկան, դրանց ընթացքը այն պատճառով, որ հենց գործոններն են գործընթացների անմիջական "շարժիչները", դրանց հիմքում ընկած պատճառները: **Դա նշանակում է, որ քաղաքականության մեջ գործոնային վերլուծության ցանկացած կիրառություն ըստ էության ներկայանում է որպես քաղաքական գործընթացների վերլուծություն:**

2. Նավթը որպես բնական ծագման "քաղաքական ապրանք"

Որպես բնական ծագման գործոն հանդես եկող բոլոր ռեսուրսների մեջ կարևորագույնը էներգառեսուրսներն են, և առաջին հերթին նավթը և

գազը, որոնք ընկած են ցանկացած երկրի տնտեսության հիմքում: Պատահական չէ, որ դրանք են համարվում էներգիայի "ամենաքաղաքականացված տեսակները": Էներգակիրների և առաջին հերթին նավթի ներքաշվածությունը գլոբալ քաղաքական գործընթացներ բացատրվում է այն հանգամանքով, որ այդ հումքի մեծ պահանջարկ ունեցող պետությունները հենց աշխարհի հզոր տերություններն են, որոնց տրամադրության տակ կան տեխնոլոգիական և ֆինանսական հսկայական միջոցներ և որոնք միջազգային քաղաքական գործընթացների գլխավոր դերակատարներն են: Այդ ռեսուրսին տիրելու համար նրանց մրցակցության պատճառով նավթ արդյունահանող երկրները հաճախ դառնում են միջազգային զինված բախումների թատերաբեմ: Վերջին տասնամյակների պատմական նշանակության մի շարք իրադարձություններ՝ ութամյա Իրան-Իրաքյան պատերազմը, "Տանկերային պատերազմը" Պարսից ծոցում, "Անապատի փոթորիկը", Իրաքի ներխուժումը Քուվեյթ, Միացյալ Նահանգների գրոհը Աֆղանստանի վրա, ԱՄՆ վերջին ներխուժումը Իրաք, տեղի են ունեցել նավթի հանույթի ամենագլխավոր վայրերում կամ դրանց մատույցներում: "Նավթային քաղաքականության" մեջ, այսպիսով, ներգրավված են թե նավթ սպառող, թե նավթ արտահանող պետությունները, որոնց թվում նավթային հսկայական պաշարներ ունեցող Պարսից ծոցի ավազանի երկրները, ի թիվս որոնց և Իրանը:

Ինչպես ցույց է տալիս քսաներորդ դարի պատմությունը, նավթը երկսայր "քաղաքական ապրանք" է: Այն ոչ միայն ազգային անվտանգության երաշխիք է, այլև արտաքին լուրջ վտանգների աղբյուր: Նրա դերը այնքան նշանակալից է XX դարի Իրանի քաղաքական պատմության մեջ, որ վստահորեն կարելի ասել՝ այդ պատմության բոլոր կարևոր շրջադարձերում «նավթային թեման» եղել է առանցքայինը: Նավթի՝ ռազմավարական բնույթի "քաղաքական ապրանք" լինելու գիտացման համար կրիտիկական կետ էր երկրորդ համաշխարհային պատերազմը, որի ընթացքը և արդյունքները դաշնակից պետությունների քաղաքական գործիչներին բերեցին այն համոզման, իրենք հաղթել են՝ "լողալով նավթի ծովի վրայով, երբ մի կաթիլ նավթն արժեր մի կաթիլ արյուն" /2/:

Քսաներորդ դարի վերը նշված իրադարձությունները թույլ են տալիս հաստատելու, որ նավթն այն "ամենաքաղաքականացված ապրանքն" է, որն ունակ է արագորեն հայտնվելու պետությունների քաղաքական հարաբերությունների օրակարգում որպես այդ հարաբերությունների առանցքային հարց:

Նավթի պահանջարկը արդյունաբերապես զարգացած երկրների արտաքին քաղաքականության ուղղորդիչներից է, ինչով և պայմանավոր-

ված է այն հանգամանքը, որ նրանք, հատկապես խոշոր արդյունաբերական երկրները, իրենց արտաքին քաղաքականության մեջ հաշվի են առնում Մերձավոր Արևելքի և Պարսկական ծոցի նավթը՝ որպես մի գործոն, որից կախված է իրենց տնտեսական կյանքը /3/: Դա նրանց ընդհանուր անվտանգության խնդիրն է շոշափում, քանի որ Նավթի արտադրության քանակի և գնի որևէ տատանում իր ազեցությունն է թողնում բոլոր երկրների վրա: Իրադարձությունների խորքում, ինչպես 1977 թվականին մատնանշել է Հենրի Քիսինջերը, ընկած էր այն հանգամանքը, որ Միացյալ Նահանգներն իր պատմության մեջ առաջին անգամ հայտնվել է մի այնպիսի կացության մեջ, երբ պետությունների մի փոքրիկ խումբ կարող էր ճնշում գործադրել Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական որոշումների կայացման վրա՝ որոնք չեն բխում ԱՄՆ պետական շահերից /4/: Պատահական չէր, որ Հենրի Քիսինջերի խորհրդով Միացյալ Նահանգներում հիմնադրվեց էներգետիկայի հարցերով վարչություն, որը զբաղվում էր նավթի այլընտրանքի փնտրտուքով /5/:

Այսօր Մերձավոր Արևելքի և Պարսից ծոցի դերն աշխարհում նշանակալից է, քանի որ համաշխարհային նավթի պաշարների երեք քառորդը գտնվում է մուսուլմանական երկրներում, և որի շուրջ երկու երրորդը՝ Պարսից ծոցում: Նավթի օրեկան առևտրի շուրջ քառասուն տոկոսն անցնում է Պարսկական ծոցով: Միացյալ Նահանգներում սպառվող նավթի շուրջ քսան տոկոսը նույնպես Պարսկական ծոցի նավթն է: Ծոցի նավթային պաշարները կհերիքեն դեռևս 100-150 տարի և համարվում են հայտնի պաշարներից "ամենաերկարակյացը": Նավթի արտահանումն այստեղից բավականին մատչելի է, տեղափոխումը՝ հեշտ, նավթը որակյալ է և դեռ կարող են հայտնաբերվել նոր հանքավայրեր /6/): Ոչ մի մասնագետ չի կասկածում, որ Արևմուտքն իր օրեցօր աճող նավթային պահանջմունքներով դեռ երկար ժամանակ կախված կմնա այս տարածաշրջանից: Նավթային թեմայի քաղաքագիտական բնույթի բացառապես բոլոր հետազոտությունները, ելնում են այն ակնհայտ իրողությունից, որ արդի գլոբալ անվտանգությունը մեծ հաշվով պայմանավորված է նավթով: Եվ դա կմնա այդպես այնքան ժամանակ, քանի դեռ չի հայտնաբերվել նրա համապատասխան փոխարինողը:

Բազմաթիվ են քաղաքական այն հարցերը, որ վերջին հարյուրամյակում ծագել են նավթ արտահանող երկրների առջև: 1969թ. *Նավթ արդյունահանող պետությունների կազմակերպության* (ՆԱՊԿ/OPEK) ձևավորումը նավթ արտադրող պետությունների արտաքին քաղաքականության կարևոր իրադարձություններից մեկն էր /7/: ՆԱՊԿ-ի գլխավոր նպատակներն են՝ անդամ երկրների նավթային քաղաքականության կոորդինացու-

մը, նավթամթերքի շուկայի պաշտպանության և գների կայուն մակարդակի պահպանումը, ապառող երկրներին նավթի էֆեկտիվ, շահավետ և կանոնավոր մատակարարումը և նավթ արդյունահանող ձեռնարկություններում ներդրողների կապիտալի արդարացի վերադարձը:

3. Նավթը Իրանի քաղաքական կյանքում

Նավթը Իրանի քաղաքական պատմության մեջ մտավ 1901 թվականին, երբ անգլոհպատակ Ուիլիամ Նորս դ՝ Արսին իրանական նավթի շահագործման իրավունք ստացավ մինչև 1961 թվականը: Առաջին նավթի շիթը ժայթքեց 1908 թվականին Մասջիթ-ե Սոլեյման քաղաքի հորանցքից, և դա հիմք դարձավ Անգլիայի և Իրանի միջև ստեղծվող "նավթային հարաբերությունների" /8/:

Իրանի պարագայում նավթը հզոր գործոն է, որն իր անմիջական ազդեցությունն է թողնում նրա արտաքին քաղաքականության վրա /9/: Նա ՆԱՊԿ անդամ երկրներից երկրորդ խոշոր արտահանողն է Սաուդյան Արաբիայից հետո, և չորրորդ երկիրը Սաուդյան Արաբիայից, Ռուսաստանից և Նորվեգիայից հետո: Իրանի քաղաքական վերնախավը հրաշալի է գիտակցում, որ արտահանող երկրների համար նավթը մեր օրերում քաղաքական և տնտեսական զենք է միաժամանակ: "Երբ վտանգի կենթարկվեն մեր ազգային շահերը,- նշել է Իրանի նավթի նախարարը,- մենք գործի կդնենք մեր ձեռքի տակ գտնվող բոլոր հնարավորությունները, և նավթը դրանցից մեկն է" /10/:

Իրանը ոչ վաղ անցյալում անցել է մի շարք ներքին և արտաքին փորձությունների միջով՝ հեղափոխական ցնցումներ Իրանում, արտասահմանյան ներդրողների վրա Միացյալ Նահանգների կողմից կիրառվող պատժամիջոցներ, Իրան-Իրաք պատերազմ, մեկ ապրանքից՝ նավթից, կախվածության հետևանքով եկամուտների կորուստներ և զարգացման հարուցած խոչընդոտներ բավարար էին, որ Իրանի քաղաքական գործիչների և քաղաքագետների համար պարզ դառնար, որ Իրանի արտաքին քաղաքականությունը պետք է պլանավորել և իրագործել նավթային գործոնի հաշվառումով: Ընդ որում՝ ոչ միայն Իրանի համար այդ գործոնի դրական դերակատարության, երկրի արտաքին եկամուտների և տնտեսական զարգացման համար նավթի գլխավոր աղբյուր լինելու տեսակետից, այլև այն վտանգների տեսակետից, որ ուղեկցում են այդ գործոնին:

Հատուկ հիմնավորման կարիք չունի նաև այն, որ նավթ ներկրող հզոր տերությունների և նավթ արտահանող երկրների տնտեսական և քաղաքական հարաբերությունները, նրանց արտաքին քաղաքականությունը դասավորվում են մի կողմից նավթի և մյուս կողմից նրանց ներքին սոցիալական ծագման գործոնների՝ քաղաքական կարգի, տնտեսական

խնդիրների, հոգևոր ու մշակութային արժեքների ազդեցությամբ: Իր դերն է կատարում նաև միջազգային քաղաքական համակարգը: Թվարկած գործոնները և նավթը ուղղորդում են Իրանի արտաքին քաղաքականությունը՝ բարդ փոխազդեցությունների մեջ պայմանավորելով միմյանց: Դա հրատապ և դեռևս խորը հետազոտության կարոտ մի ոլորտ է, որտեղ զիտական հետագա լուսաբանման կարիքն ունեցող շատ խնդիրներ կան: Ահա դրանցից առավել կարևորները մեր տեսակետից՝

- վերհանել Իրանում նավթի հայտնաբերումից ի վեր երկրի արտաքին քաղաքականության վրա նավթի ունեցած ազդեցությունը, համեմատել նավթային գործոնը Իրանի արտաքին քաղաքականության վրա ազդեցություն ունեցած այլ գործոնների հետ, գնահատել 1979 թ. Իսլամական հեղափոխության ընթացքի և հեղափոխությունից հետո ԻԻՀ արտաքին քաղաքական ուղեգծի վրա նավթի ունեցած ազդեցությանը,

- վերլուծել նավթային գործոնի ազդեցությունը Իրան-Իրաք պատերազմի (1980-1988) ժամանակահատվածում՝ իր հարուցած խնդիրներով և բնել նավթի դերը Իրանի հետպատերազմյան վերակառուցման գործում,

- բնել ԱՄՆ-ի, Եվրոպայի և Պարսից Ծոցի երկրների հետ ԻԻՀ արտաքին քաղաքական հիմնախնդիրները նավթային թեմայի համատեքստում,

- քաղաքագիտական գնահատական տալ Իրանի արտաքին ու ներքին քաղաքականության շուրջ բարենորոգչական ու պահպանողական հոսանքների կոնֆլիկտային երկխոսության առանցքային հարցադրումներին,

- պարզել Իրանի միջուկային ծրագրերի կապը նավթային խնդիրների հետ և դրանց ազդեցությունը Իրանի արտաքին քաղաքականության վրա:

Նշված հարցերը աշխուժորեն քննարկվում են ինչպես Իրանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ հատկապես արևմտյան քաղաքագիտական գրականության մեջ: Դրանց շուրջ արտահայտվում են տարբեր, իսկ հաճախ նաև իրարամերժ տեսակետներ: Մենք գտնում ենք, որ հիմնախնդրի օբյեկտիվ վերլուծության համար կարևոր են մի շարք ելակետային անվիճելի դրույթներ, որոնք որոշակիորեն ուղղորդում են նշված հացերի ուսումնասիրության ընթացը, կատարելով յուրօրինակ մեթոդաբանական կարգավորիչների դեր: Նշենք դրանցից առավել կարևորները:

Առաջին: Բնական /ոչ սոցիալական ծագման/ գործոնների մեջ Իրանի արտաքին քաղաքականության վրա թողած ազդեցության տեսակետից ոչ մի գործոն չի կարող հավասարեցվել նավթային գործոնին: Իրանի բազմադարյան պատմության մեջ նավթային գործոնի հետ մի շարք վերա-

պահումներով համեմատելի է արոտավայրերի գործոնը, որը պայմանավորել է Իրանի շուրջը և նրա ներսում ծավալված արտաքին ու ներքին քաղաքական գործընթացները թաթար-մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանում: Բայց արոտավայրերի նկատմամբ սպառողական վերաբերմունքի ու ավարառության վրա հենված իրենց կացութաձևով քոչվորները չէին կարող Իրանը դուրս բերել տնտեսական ինտենսիվ զարգացման ուղի և "կյանք տալ" կայուն պետական գոյացությունների: Երկիրը էքստենսիվ ինտենսիվ զարգացման ուղի դուրս բերեց միայն նավթը: Ահա թե ինչու օրինաչափ է Իրանի քաղաքական պատմության մեջ **գործոնային վերլուծության համատեքստում** առանձնացնել *մինչնավթային* ու *նավթային* շրջանները:

Երկրորդ: Իրանի արդի քաղաքական զարգացումների համար բնորոշ պահպանողականների /կոնսերվատորների/ և բարեփոխողների /ռեֆորմատորների/ հաճախ կոնֆլիկտային բնույթ ստացող երկխոսությունը իր նախաձևերն ու նախադեպերն ունի Իրանի քաղաքական պատմության մեջ, որոնք Իրանի ներքաղաքական կյանքի շատ կողմեր բացատրելի են դարձնում որպես քաղաքական ավանդույթի երևույթներ:

Երրորդ: Հետհեղափոխական շրջանում իրանական նավթի և Իրանի միջուկային ծրագրերի շուրջ ծավալված միջազգային քաղաքական գործընթացներն ապացուցում են, որ և տնտեսական, և քաղաքական, և մշակութային առումներով ժամանակակից աշխարհը ավելի շուտ բազմաբևեռ կամ անբևեռ է, քան միաբևեռ, հակառակ այն բանի, որ աշխարհի քաղաքական միաբևեռության մասին տեսակետը եռանդագին քարոզվում է ամերիկամետ գրականության մեջ: Ընդ որում, համաշխարհային քաղաքական միաբևեռության հերքման իրանական փաստարկը բացառիկ է, քանի որ Իրան-ԱՄՆ բաց առճակատումը ընթանում է ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլև գաղափարախոսական ու քաղաքակրթական ճակատներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Lloyd Jensen. Explaining Foreign Policy. London: 1982, 45-71, 107-157:
2.Rohani, F. The History of Oil Nationalization of Iran. Tehran: Books Company. 1973:75:
3.Bariston,RP. Modern Diplomacy.New York:Longman,INC. 1991.128:
4.Asadian, A. The Security Policy of U.S in Persian Gulf. Tehran: Pejoheshkade Motaleat Rahbordi. 2002:58):
5. Fateh, M.. 50 Years The Iran's Oil.Tehran:Payam Press. 1979. 2-18:
6.Elahi, H. The Persian Gulf (and its problems).Tehran: Ghoomes Publishing Co Ltd. 1994:37
7. Fateh, M. 50 Years The Iran's Oil.Tehran:Payam Press. 1979:34:
8. Fateh. M. 50 Years The Iran's Oil.Tehran:Payam Press. 1979: 23-45):
9.Bariston, RP. Modern Diplomacy.New York:Longman,INC. 1991:128):
10. Nasri, Gh. Oil and National Security Islamic Republic of Iran. Tehran:Pezoheshkade Motaleat Rahbordi. 2001:18-28: